ՀՏԴ 332.1(479.243) Տնտեսագիտություն

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ -ՈՒՄ

Շ.ԱՍՐՅԱՆ

Բանալի բառեր-տնտեսական վերափոխումներ, տնտեսական անկում, տնտեսական աճ, կենսամակարդակ, էներգաապահովություն, ՀՆԱ-ի կառուցվածք, կառուցվածքային տեղաշարժ, կառուցվածքային քաղաքականություն, տնտեսական զարգացում

Ключевые слова: экономические преобразования, экономический спад, экономический рост, средства к существованию, энергоэффективность, структура ВВП, структурный сдвиг, структурная политика, экономическое развитие

Key words: economic transformation, economic downturn, economic growth, livelihood, energy efficiency, GDP structure, structural shift, structural policy, economic development

ОСОБЕННОСТИ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА И СТРУКТУРНЫХ СДВИГОВ В НКР ЗА ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ

Ш.АСРЯН

Экономические преобразования в НКР за годы независимости были направлены на экономический рост и структурные сдвиги в экономике.

Макроэкономическое стабильное состояние в НКР, сложившееся на постсоветском этапе, в краткосрочный период дало положительные результаты, достижения в экономике проявились высокими темпами экономического роста, а также улучшением структуры валового внутреннего продукта и социально-экономических показателей страны.

В статье проанализированы особенности экономического роста и структурных сдвигов в экономике НКР за годы независимости.

Основная цель статьи-выявить особенности экономического роста и структурных пропорций в экономике, а также наметить пути дальнейшего развития экономики НКР.

PECULIARITIES OF ECONOMIC GROWTH AND STRUCTURAL SHIFTS IN THE NKR DURING THE YEARS OF INDEPENDENCE

SH. ASRYAN

Economic transformations in the NKR for the years of independence were aimed at economic growth and structural changes in the economy.

The macroeconomic stable state in the NKR, formed in the post-Soviet period, gave positive results in the short term, the achievements in the economy were manifested by high rates of economic growth, as well as by improving the structure of the country's gross domestic product and socio-economic indicators.

The article analyzes the features of economic growth and structural shifts in the NKR economy during the years of independence. The main purpose of the article is to reveal the features of economic growth and structural proportions in the economy, and outline ways for further development of the economy of the NKR.

Անկախության շրջանում ԼՂՀ տնտեսության բարեփոխումները ուղղված էին տնտեսական աճի և տնտեսության կառուցվածքային բարեփոխումներին: Հետխորհրդային շրջանում ԼՂՀ-ում ձևավորված մակրոտնտեսական կայուն իրավիճակը կարճ ժամանակաշրջանում տվեց դրական արդյունքներ, և ԼՂՀ տնտեսական նվաճումները դրսևորվեցին տնտեսական աճի բարձր տեմպերով, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական ցուցանիշների, ՀՆԱ-ի կառուցվածքի բարելավմամբ: Հոդվածում վերլուծության է ենթարկվել անկախության տարիների կտրվածքով ԼՂՀ տնտեսական աճի և տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի առանձնահատկությունները: Հոդվածի հիմնական նպատակը տնտեսական աճի և տնտեսության կառուցվածքային համամասնությունների առանձնահատկությունների վերհանումը և ԼՂՀ տնտեսության զարգացման հետագա ուղիների նախանշումն է:

ԼՂՀ -ն իր անկախությունը հերոսաբար ձեռք բերելուց հետո՝ սկսած 1995 թվականից թևակոխեց որակապես նոր ժամանակաշրջան, որը քաղաքական, սոցիալական և տնտեսական համակարգերի արմատական վերափոխումների ու բարեփոխումների սկիզբ դարձավ: Հանրապետությունն ԱՊՀ մյուս անդամ երկրների նման կրեց այն դժվարությունները, որոնք բնորոշ են անցումային փուլը հաղթահարող բոլոր պետություններին: Ավելին. այդ դժվարություններին ավելացան նաև այնպիսինները, որոնք առանձնահատուկ էին միայն ԼՂՀ-ին: Տրանսպորտային շրջափակման, վառելիքի ներմուծման ծավալների խիստ կրճատման արդյունքում երկրում նկատվեց էլեկտրաէներգիայի դեֆիցիտ, իսկ ՀՀ-ում նույն ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի արտադրությունը պակասեց 58%-ով[1]: ՀՀ ՀՆԱ-ն 1993 թ. կազմեց 1990 թ. մակարդակի միայն 46.9%-ը, որն այդ ժամանակ տնտեսական անկման ամենաբարձր ցուցանիշներից էր ԱՊՀ երկրներում: Բարեփոխումների սկզբնական փուլում ԼՂՀ տնտեսությունը բնութագրվում էր արտադրական ներուժի մոտ 80 %-ի չափով կորստով, սպառողական պահանջարկի նկատմամբ թույլ կողմնորոշմամբ, արդյունաբերության ցածր արդյունավետությամբ և այլն: Չնայած տնտեսական անկման առավել խորը մակարդակին և ելակետային առավել ցածր պայմաններին, այնուամենայնիվ բազմաթիվ հետխորհրդային հանրապետությունների տնտեսությունների համեմատությամբ ԼՂՀ տնտեսության վերականգման գործընթացը շատ ավելի վաղ սկսվեց (Գծապատկեր 1):

Տնտեսական բարեփոխումների շնորհիվ ստեղծվեց մակրոտնտեսական նպաստավոր միջավայր, և սկսած 1996թ-ից գրանցվեց տնտեսական աճ : Միջին հաշվով 1996-2000 թթ. տնտեսական աճը ԼՂՀ -ում կազմեց 4,2%: 1990-2000թթ. հետխորհրդային բոլոր հանրապետություններում, բացառությամբ Ղրղզստանից, գրանցվեցին անկման բարձր ցուցանիշներ:

Հետխորհրդային հանրապետությունների և ԼՂՀ ՀՆԱ-ի դինամիկան (%)

Գծապատկեր 1[2]



	Ռուսաստան	Էստոնիա	Լատվիա	Լիտվա	Բելոռուսիա	Ղազախստան	Ուկրաինա	Վրաստան	Ադրբեջան	Թուրքմենստան	Մոլդովա	Հայաստան	Ուզբեկստան	Ղրղզստան	Տաջիկստան	ԼՂՀ
1990-2000	-4,7	0,5	-2,7	-1,5	-1,6	-4,7	-9,3	-7,1	-6,3	-4,9	-9,6	-1,9	-0,2	4,1	-10,4	4,2
2000-2008	6,7	6,7	8,1	8	8,6	9,5	7,2	8,1	18,1	14,5	6,3	12,4	6,6	4,5	8,6	9
2009	-7,8	-14,3	-14,8	-17,7	0,2	1,2	-14,8	-3,8	9,3	6,9	-6,9	-14,1	8,1	2,9	3,9	13,1
2015	-3,7	1,1	1,9	1,6	-3,9	1,2	-9,9	2,8	1,1	6,5	-0,5	3	8,5	3,5	6	9,1

[1] Տես՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության թիվ 994 որոշում, 8 օգոստոսի, 2003, Ե., 2003, էջ 25, European Bank of Reconstruction and Development (EBRD), Transition Report, 1999, p. 189

[2] Stat-nkr.am

Եթե համեմատելու լինենք հետխորհրդային հանրապետությունների տնտեսական աճը 2000-2008 թթ. կտրվածքով, ապա պետք է ասել, որ Ադրբեջանում և Թուրքմենիայում գրանցվեց տնտեսական աճ, որի բարձր տեմպերը պայմանավորված են նավթահումքային գործոններով: ՀՀ տնտեսական աճի միջին տեմպը 12,4 % է, և այդ ցուցանիշով ՀՀ-ն հետխորհրդային հանրապետությունների համեմատությամբ զբաղեցնում է երրորդ տեղը: ԼՂՀ -ն տնտեսական աճի միջին տեմպը նույն ժամանակում գերազանցում է 9 %-ի մակարդակը, իսկ 2009-2015 թթ. ՝ 9,2 %-ը:

ԼՂՀ-ում ձևավորված կայուն մակրոտնտեսական իրավիճակն ու ինֆլյացիայի ցածր մակարդակը նպաստեցին տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովմանը, և հետագայում ևս ԼՂՀ-ին հաջողվեց դիմակայել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջին և երկրորդ ալիքների բացասական ազդեցություններին՝ շնորհիվ մի կողմից՝ . արտաքին միջազգային ֆինանսական շուկաների հետ թույլ կապերի, մյուս կողմից՝ պետական արդյունավետ քաղաքականության :

2008թ. ՀՀ ՀՆԱ-ի հավելաճը ծրագրվածից ցածր է, տնտեսությունն արձանագրեց 6.8% տնտեսական աճ՝ ԱՊՀ երկրների 5% տնտեսական աճի միջին ցուցանիշի դիմաց: Իսկ 2008թ. ԼՂՀ տնտեսական աճը կազմեց 14,3 %, իսկ 2009թ–ին՝ 13,1 %: Տնտեսական աճի բարձր մակարդակ ապահովվեց նաև 2015թ., երբ թե՛ դիտարկվող հանրապետությունների տնտեսությունները և թե՛ համաշխարհային տնտեսությունը գրանցեցին կրճատման զգալի չափեր: Բան այն էր, որ ԼՂՀ տնտեսության կայունությունը հնարավոր դարձավ պահպանել համայն հայության ջանքերի և ՀՀ միջպետական վարկի միջոցով:

Հանրապետությունում էլեկտրաէներգիայի արտադրության աճի բարձր տեմպերը կարճ ժամանակահատվածում հնարավորություն ստեղծեցին լուծելու էներգաապահովության հիմնախնդիրը: Արդեն 2015թ-ին ԼՂՀ -ում մեկ բնակչի հաշվով արտադրվել է 1494,26 կվտ-ժ էլեկտրաէներգիա:

ԼՂՀ-ում արտադրված էլեկտրաէներգիայի ցուցանիշները 2008-2015թթ. (մլն կվտ-ժ)

Գծապատկեր2[1]



Ընդհանուր առմամբ 1996-2015 թթ. ԼՂՀ ՀՆԱ-ն աճել է 14,7 անգամ, արդյունաբերության ծավալը՝ 32,5 անգամ, իսկ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝ 13 անգամ և գերազանցելով Ուկրաինայի, Տաջիկստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի ցուցանիշները ՝ կազմել 2980 դոլար: **(Հավելված1)**

Տնտեսական աճի բարձր տեմպերը իրենց դրական դերն ունեցան սոցիալ-տնտեսական բնագավառում: Նշված էֆեկտներից կարելի է առանձնացնել՝

- բնակչության բարեկեցության աճը,
- տնտեսության ինքնաապահովության աճը,
- տնտեսության անվտանգության մակարդակի աճը,
- եվ այլ սոցիալտնտեսական էֆեկտները:

[1] Stat-nkr.am

ԼՂՀ և հետխորհրդային հանրապետությունների մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 1990թ. և 2015թ

Գծապատկեր 3[1]



Քանի որ կառուցվածքային վերափոխումները հանդիսանում են դինամիկ տնտեսական զարգացման անհրաժեշտ բաղկացուցիչը, ուստի և տնտեսական աճի դիտարկումները պետք է իրականացնել նաև կառուցվածքային տեղաշարժերի համատեքստում: Ընդհանուր առմամբ թե՛ նախաճգնաժամային և թե՛ հետճգնաժամային ժամանակահատվածում ԼՂՀ տնտեսական աճի հիմնական շարժիչները համարվում են արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, շինարարությունը, ծառայությունների ոլորտը: Իսկ գյուղատնտեսության համեմատությամբ արդյունաբերության և շինարարության աճի առաջանցիկ տեմպերը վկայում են ԼՂՀ տնտեսական աճում որակական փոփոխությունները:

Մակրոմակարդակում կառուցվածքային փոփոխությունները ԼՂՀ- ում իրականացվեցին ինչպես շուկայական մեխանիզմների ազդեցությամբ, այնպես էլ նպատակաուղղված պետական քաղաքականության արդյունքում: Այս դեպքում պետական քաղաքականությունը երբեմն իրականացվել է կառուցվածքային դեֆորմացիաների վրա կետային ներգործմամբ:

ԼՂՀ հանքագործական և մշակող արդյունաբերության ծավալի ինդեքսները (2008-2015թթ(%))

Գծապատկեր 4[2]



[1] Stat-nkr.am
[2] Stat-nkr.am

ԼՂՀ արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության ծավալի ինդեքսները (2008-2015թթ(%))

Գծապատկեր 5[1]



Կառուցվածքային փոփոխությունների ընթացքը մեծմասամբ կախված է տնտեսության առկա տեխնիկական ներուժից, տեղաբաշխման համակարգից, հանրային բարիքների փոխանակումից, ինչպես նաև աշխատուժի որակավորումից և աշխատանքի արտադրողականությունից: Նշված գործոնները հաղթահարելու և երկրում բարեհաջող իրականացված կառուցվածքային վերափոխումների մի շարք ծրագրերի շնորհիվ ԼՂՀ-ում ապահովվեց ՀՆԱ-ի և ՀՆԱ-ի արտադրական կառուցվածքի առաջադիմական էական տեղաշարժեր: Այսպես, եթե 2000թ. ՀՆԱ-ի կառուցվածքում արդյունաբերության տեսակարար կշիռը կազմում էր 7,2 %, ապա արդեն 2008 թ՝ 13,9 %, գյուղատնտեսության տեսակարար կշիռը 30,6 %-ից նվազում է և 2008թ. կազմում 15,8 %: ՀՆԱ-ի արտադրական և ծառայությունների կառուցվածքում պատկերը հետևյալն է. 2000թ. արտադրական հատվածի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմում էր 45,5 %, արդեն 2008 թ՝ 39,8 %, ծառայությունների տեսակարար կշիռը 52,9 %-ից աճելով կազմել է 54 %:

Առավել ընդհանուր տեսակետից համակարգի տնտեսական բնութագրիչների յուրաքանչյուր փոփոխություն որոշակի ժամանակահատվածի ընթացքում կարող են մեկնաբանվել որպես կառուցվածքային փոփոխություն: Սակայն կառուցվածքային վերափոխումները ավելի նեղ իմաստով նշանակում են սպառողական կայուն կապերի համակարգի փոփոխություն, որը բերում է որակապես նոր իրավիճակի: Անշուշտ, նոր իրավիճակի գլխավոր խնդիրը պետք է լինի ավելի առաջադեմ հարաբերությունների ձևավորում տնտեսական գործունեության թե՛ մակրո-, թե՛ միկրոբնագավառներում:

Հիմնական ճյուղերի տեսակարար կշիռը ԼՂՀ ՀՆԱ-ում (%)

Գծապատկեր 6[2]



[1] Stat-nkr.am
[2] Stat-nkr.am

2008-2015թթ. տնտեսական աճի շարժիչները նույնն էին, ինչ որ մինչ չգնաժամը, այդ իսկ պատճառով էլ տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի բնույթը չփոխվեց, և միտումների շարունակական լինելու արդյունքում արդեն 2015թ. ՀՆԱ-ում արդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 16,4%, իսկ գյուղատնտեսությանը՝ 13,3 %, շինարարությանը 13,2 %: Ու թեև կառուցվածքային դրական տեղաշարժերն ակնհայտ են, այնուամենայնիվ վերամշակող և հանքարդյունաբերության աճի տատանումներով պայմանավորված՝ արդյունաբերության աճի տեմպերը անկայուն են:

Անկայուն են նաև գյուղատնտեսության և շինարարության աճի տեմպերը: Քանի որ ԼՂՀ տնտեսական աճի տատանումները բնակչության բարեկեցության և սոցիալական ապահովության համար անբարենպաստ ռիսկեր են, հետևապես տնտեսության ճյուղերի աճի տատանումների ցանկացած անկայունություն կարելի դիտել որպես սոցիալ-տնտեսական կայունության լուրջ մարտահրավեր: Մյուս կողմից բոլոր դեֆորմացիաների հարթեցումը, կապված կառուցվածքային վերափոխումներիի հետ, այս կամ այն չափով անդրադառնում են աշխատանքի շուկայի կառուցվածքի և գործազրկության մակարդակի վրա, որը՝ որպես սոցիալական խնդիր, ԼՂՀ- ում դեռևս վերջնականապես հաղթահարված չէ:

Չնայած ԼՂՀ կառուցվածքային փոփոխությունները կրում են առաջատար բնույթ, այնուամենայնիվ դեռևս չի հաջողվել ապահովել տնտեսության և հատկապես ՀՆԱ-ի իրական հատվածի առաջատար կառուցվածք: ՀՆԱ-ի կառուցվածքը դիվերսիֆիկացված չէ: Նույնը վերաբերվում է վերամշակող արդյունաբերությանը, որտեղ սննդամթերքի արտադրության տեսակարար կշիռը բարձր է 60 %-ից: ՀՆԱ-ի կառուցվածքային հաջորդ խնդիրը արտահայտվում է եկամուտների ձևավորման հաշիվներում, որտեղ աշխատավարձի տեսակարար կշիռը եկամուտներում կազմում է 50%, մինչդեռ զարգացած երկրներում այն գերազանցում է ազգային եկամտի 2/3-ը: Առհասարակ հետխորհրդային հանրապետություններում ՀՆԱ-ի ձևավորված կառուցվածքը վկայում է, որ արտադրական և գիտատեխնիկական ներուժի կիրառումը անցումային երկրների տնտեսական կառուցվածքի ձևավորման մեջ ոչ միայն ընթանում է որոշակի դժվարություններով, այլև հանդիսանում է անցման բնութագրիչ առանձնահատկությունը:

Մեծ դինամիզմով կառուցվածքային վերափոխումները առաջ են քաշում գերխնդիրներ, որոնք ապահովում են երկարաժամկետ կայուն տնտեսական աճ: Քաղաքականությունը, որն ուղղված է այդ գերխնդիրների լուծմանը, իրականացվում է տնտեսական ակտիվության տատանումների հարթումով, արդյունաբերական գործոնների վերաբաշխումով՝ դեպի մրցունակ միջավայր, և շատ այլ միջոցներով:

Ներկա դրությամբ ԼՂՀ-ի համար քաղաքական դաշտում առկա խնդիրը ճանաչումն է, սակայն դրանից ոչ պակաս կարևոր և բարդ է նաև ԼՂՀ տնտեսության համաշխարհային զարգացումների մեջ ինտեգրումը: Այդ, ինչ խոսք, բախվում է տնտեսության մրցունակության, ցնցումների նկատմամբ դիմակայության մարտահրավերների հետ, որոնց ԼՂՀ-ն զարգացման ներկա փուլում դեռևս պատրաստ չէ: Սակայն համաշխարհային տնտեսության մեջ, զարգացման կենտրոնների փոփոխություններով պայմանավորված, նշված հարցերը ստանում են սուր հնչեղություն: Այսպես, համաշխարհային տնտեսության զարգացման միտումները և համապատասխան կանխատեսումները հանգում են նրան, որ համաշխարհային տնտեսական զարգացման մեջ գնալով կրճատվում է զարգացած յոթնյակի չափաբաժինը, հակառակ դրան աճում է զարգացող երկրների տեսակարար կշիռը: Խոսքը գնում է ՌԴ-ի, Չինաստանի, Թուրքիայի, Ինդոնեզիայի, Մեքսիկայի, Հնդկաստանի մասին: Նման զարգացումները ցույց են տալիս, որ ԼՂՀ-ն համաշխարհային տնտեսական զարգացումներում որոշակի ինտեգրում ունենալու համար նախ և առաջ պետք է զարգացող երկրների զարգացումների հետ արտաքին տնտեսական հարաբերությունների ներդաշնակեցման ուղղությամբ փորձեր ձեռնարկի:

Կառուցվածքային խնդիրները, ազգային ներդրումների և ազգային խնայողությունների միջև մեծ ճեղքվածը, տնտեսության փոքր չափերը, աշխարհաքաղաքական սահմանափակումները լուրջ խոչընդոտներ են ստեղծում ԼՂՀ տնտեսության մրցունակության և զարգացման համար՝ բացասաբար ազդելով տնտեսական աճի, երկրի արտաքին ռիսկերի դիմակայության վրա: Այդ

գործոնները խորացնում են նաև տնտեսության կառուցվածքային թույլ կողմերը: Հետևապես ԼՂՀ տնտեսության ռացիոնալ կառուցվածի ձևավորումը այսօր էլ երկրի կայուն զարգացման գլխավոր հարցերից մեկն է: Սակայն տնտեսության կառուցվածքի ձևավորման համար անընդունելի է, ինչպես միայն շուկայական մեխանիզմներով կառուցված հայեցակարգը, այնպես էլ միայն պետական ազդեցությամբ հայեցակարգը:

Անշուշտ կարելի է պնդել, որ տնտեսությունում յուրաքանչյուր կառուցվածքային փոփոխություն համապատասխանաբար արտացոլվում է աշխատանքային հարաբերություններում, և ընդհակառակը՝աշխատաշուկայում կառուցվածքային փոփոխությունները հանգեցնում են տնտեսական իրավիճակի էական փոփոխությունների ընդհանրապես:

Այսօր կառուցվածքային լայնամասշտաբ քաղաքականության իրականցման հարցերը առավել կարևորներից են, քանի որ դրանք ենթադրում են գլոբալ կառուցվածքային և ինստիտուցիոնալ վերափոխումներ ոչ միայն տնտեսությունում, այլև հասարակության ամբողջ սոցիալ-քաղաքական կյանքում: Այդ գործընթացները բերում են աշխատաշուկայի արմատական վերակազմավորման, նոր մասնագիտությունների առաջացման, բնակչության լայն խավերի վերապատրաստման, գործազրկության մակարդակի փոփոխության և միգրացիոն գործընթացների հաշվին աշխատաշուկայի շարժունակության մեծացման: Հարցն այն է, որ աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի միջև առաջանում է անհամաչափության, բարձր գործազրկության մակարդակի առկայության դեպքում չեն օգտագործվում մեծ քանակով պահանջարկ ունեցող աշխատատեղեր, և բնականաբար չեն իրացվում արտադրական բոլոր հնարավորությունները, դանդաղում են ՀՆԱ-ի աճի տեմպերը: Կախված իրավիճակից՝ միգրացիոն գործընթացները աշխատաշուկայում կառուցվածքային տեղաշարժերի համար կարող են լինել և՛ որպես արդյունք, և՛ որպես պատճառ: Հետևապես տնտեսության կառուցվածքային վերափոխումների գործընթացում այս հակասությունների հայտնաբերումը, նրանց հաղթահարման միջոցների մշակումը ԼՂՀ-ի համար կարող են դառնալ երկրի հետագա սոցիալ-տնտեսական զարգացման համար կարևոր ուղի:

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 1990թ. և 2015 թ. ԼՂՀ և հետխորհրդային հանրապետություններում
(հազ դոլար)

Հավելված 1[1]

	1990 մեկ շնչին ընկնող ՀՆԱ հազ դոլար	2015թ. աճը 1990թ-ի համեմատությամբ	220150 մեկ շնչին ընկնող ՀՆԱ հազ դոլար 5202015
1. Ռուսաստան	3480	2,6	9054
2. Էստոնիա	3130	5,5	17288
3.Լիտվա	2840	5	14210
4. Լատվիա	2750	4,9	13618
5. Բելոռուսիա	1686	3,4	5749
6. Ղազախստան	1603	6,1	9795
7. Ուկրաինա	1569	1,2	2004
8. Վրաստան	1407	2,6	3788
9. Ադրբեջան	1248	4,5	5739
10. Թուրքմենստան	874	7,5	6622
11.Մոլդովա	817	2,2	1804
12. Հայաստան	664	5,3	3534

[1] ԱՀ-ն (ԼՂՀ) մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի հաշվարկը կատարվել է 1996թ. և 2015 թ. տվյալներով:

13. Ուզբեկստան	645	3,2	2120
14. Ղրղզստան	608	1,8	1112
15. Տաջիկստան 16. ԱՀ-ն (ԼՂՀ)	487 264	1,8 11,2	922 2980

ԼՂՀ վերամշակող արդյունաբերության կառուցվածքը 2015թ.

Հավելված 2[1]



ԼՂՀ ՀՆԱ-ն ըստ արտադրության և ծառայությունների բաղադրիչների (%)

Հավելված 3[2]



[1] Stat-nkr.am
[2] Stat-nkr.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տնտեսական աճի որակը, 2012-2013 ներհամալսարանական դրամաշնորհային հետազոտություն, Երևան, Տնտեսագետ, 2014թ.:
2. Միքայելյան Արսենի Սեյրանի, Վարկային համակարգի զարգացման հիմնախնդիրները ԼՂՀ-ում, Ը.00.03 - «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2012թ.:
3. Саргсян Г., Геворкян Р., Саргсян Н., "Аналитическая модель структурных преобразований на рынке труда", Вестник Ереванского Университета, Социология и Экономика, 3, 2011.
4. stat-nkr.am
5. armstat.am

Տեղեկություններ հեղինակի մասին.

Շ.Շ. Ասրյան ԱրՊՀ Տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը: